



Հունիսի 23-ին սկսվել են «Պատանի հնագետ» դպրոցի գործնական դասընթացները: Ներկայացնելով ուսումնական պեղավայրը՝ արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը բարի երթ է մղթել փոքրիկ հնագետներին և նշել, որ տեսական դասընթացներին ստացած գիտելիքները երեխաները կկիրառեն պեղումների գործաշրջանի ընթացքում: «Պատանի հնագետ» դպրոցը կրթական նախագիծ է, որն իրականացվում է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի կողմից: Դասընթացի հեղինակը արգելոց-թանգարանի Կարմիր բլուր մասնաճյուղի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Միքայել Բադայանն է: Դասընթացը բաղկացած է տեսական և գործնական պարապմունքներից: Տեսական պարապմունքների տևողությունը 2 շաբաթ է՝ շաբաթական 3 դաս պարբերականությամբ: Գործնական պեղումները՝ 3 շաբաթ տևողությամբ, իրականացվում են թանգարանի տարածքում գտնվող ուսումնական պեղավայրում: Դասընթացի ավարտին բոլոր մասնակիցներին տրվում են վկայականներ: